ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. դեկտեմբերի 1-ին Բրյուսելում (Բելգիայի Թագավորություն)՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Խաչիկ Հակոբյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Բրյուսել (Բելգիայի Թագավորություն)

   2017թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 2-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն **(OECD)**

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   «Կանաչ գործողությունների ծրագրի» աշխատանքային խմբի եզրափակիչ խորհրդակցություն

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   «Կանաչ գործողությունների ծրագրի» աշխատանքային խմբի եզրափակիչ հանդիպմանը մասնակցել են բարձրաստիճան պետական պաշտոնյաներ՝ Եվրոպական միության արևելյան հարևանության գործընկերության ծրագրից, Եվրոպական Միության երկրներից, «Կանաչ գործողությունների ծրագրի» ազգային համակարգողներ՝ շրջակա միջավայրի և էկոնոմիկայի նախարարություններից և փորձագետներ:

   Համաձայան օրակարգի հանդիպման ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- կայուն սպառման և արտադրության հայեցակարգի և «կանաչ տնտեսության» սկզբունքների ինտեգրումն ազգային զարգացման ծրագրերին, օրենսդրական և կարգավորիչ համակարգերին,

- ռազմավարական էկոլոգիական գնահատականի լայնածավալ օգտագործում, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ որպես հիմնական պլանավորման գործիք, ներառյալ անհատական ծրագրերը,
- աջակցություն տնտեսության մի շարք ոլորտների զարգացմանը՝ հատկապես փոքր և միջին ձեռնարկություններին,
- ազգային և միջազգային աղբյուրներից ֆինանսավորման աջակցության և մասնավոր հատվածի համար բնապահպանական ներդրումների ապահովում:

«Կանաչ գործողությունների ծրագրի» եզրափակիչ խորհրդակցությունը նվիրված էր ծրագրի հիմնական արդյունքների ամփոփմանը և Արևելյան գործընկերության վեց երկրների վրա նրա ընդհանուր ազդեցությանը՝ 2013թ-ից սկսած: Ինչպես նաև մատնանշվեցին լավագույն օրինակները և ամփոփվեցին ձեռք բերված գիտելիքներն ու մարտահրավերները:

Նախապես սահմանված օրակարգի համաձայն զեկուցում եմ ներկայացրել՝ «Աջակցություն «Վերականգնվող էներգիայի համագործակցության ծրագրին» (RECP) և Հայաստանում փոքր ու միջին ձեռնարկությունների անցմանը դեպի կանաչ տնտեսություն» վերնագրով, որտեղ ներկայացրել եմ դեպի կանաչ տնտեսություն անցման ձեռքբերումները և քաղված դասերը՝ սեկտորալ մակարդակով: Հանդիպման ընթացքում անդրադարձել եմ նաև Հայաստանի կողմից արձանագրված առաջընթացին:

<u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>

2017թ. դեկտեմբերի 1-ին Բրյուսելում (Բելգիայի Թագավորություն) կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են նաև հետագա հնարավոր քայլերը՝ աջակցելու Արևելյան գործընկերության երկրների անցմանը դեպի «կանաչ» տնտեսություն, որը հնարավորություն կընձեռի բարելավել բնակչության բարեկեցությունը, կնվազեցնի սոցիալական անհավասարությունը, կիջեցնի էկոլոգիական ռիսկերը և կկանխի բնական ռեսուրսների սպառումը:

ՀՀ բնապահպանության

նախարարի տեղակալ՝

Խ.Հակոբյան